քահ. տեսնել Նուխու պէս մի յետ ընկած գաւառական քաղաքում։ 1874 թ. և 1875 թ. սկզբնեբին Գէորգ Դ. մեծագործ Հայրապետը բազմիցս անգամ պահանջեց ինձ Նուխու Հոգ. կառավարութիւնից, որ «փութով գնամ ս. Էջմիածին մի շատ կարևոր գործի համար»։ 75 թ. Մարտ ամսին հասայ ս. Էջմիածին. հեռատես Հայրապետը շատ անգամ յորդորեց ու համոզեց ինձ, որ կուսակրօն լինիմ և դառնամ վարդապետ, բայց ես ինձ անարժան և անպատրաստ համարելով, բայէ ի բաց հրաժարուեցի այդ սրբազան կոչումից։ 1875 թ. վերջերին, յաւէրժայիշատակ Հայրապետը առանձին ս. կոնդակով կարգեց ինձ ուսուցիչ հայկական ձայնագրութեան և երգեցողութեան Թիֆլիզի բոլոր ծխական երկսեռ և օր. միջնակարգ դպրոցներում։ 1880 թ. մեկնոյն մեծագործ Գէորգ Դ. Հայրապետի հայրական յորդորմամբ և հաւանութեամբ քահ. ձեռնադրուեցի Թիֆլիզի ս. Մինաս եկեղեցու վրայ։ Բայց երբէք չեմ մոռացել իմ դժբախտ հայրենիքս, այլ նրա լուսաւորութեան և յառաջադիմութեան համար ոչ մի ջանք չեմ խնայել և խնայում մինչև ցարդ։ Թող ներողամիտ լինի ընթերցողս, որ ակամայ շեղուեցի՝ Գեր. Տ. Արիս. Սրբազանի ինձ վերաբերեալ յիշեալ անստոյգ տողերի պատճառով։ Ուտիացիների մասին երբեմն-երբեմն երևացել են Հայ մամուլի էջերում թռուցիկ թղթակցութիւններ, նամակներ և ճանապարհորդական ուսումնասիրական դիտողութիւններ, որոնց մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում յայտնի քիմիկոս պրոֆ.